


Հաստատում եմ՝

Տուրերկուլոզի ազգային ծրագրի ղեկավար

Վ. Պողոսյան



2008 թվականի հոկտեմբերի 22

Պ Լ Ա Ն

MDR-TB ԲՈՒԺՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Մշակվել է MDR-TB բուժման կազմակերպման գործողությունների հետևյալ պլանը՝

1. 90 մահճակալից բաղկացած բաժանմունքի վերանորոգման աշխատանքների իրականացում, որը նախատեսվում է ավարտել 2008 թվականի դեկտեմբեր ամսին: Նշված աշխատանքների իրականացման համար պատասխանատու է «Բաղրամյան շին» շինարարական ընկերությունը:
2. Վարակի վերահսկման կանոնների հաստատում, որը իրականացվելու է 2008 թվականի նոյեմբերի 1-ից: ՀՀ-ում տուրերկուլոզի համաճարակաբանական հսկողության պատասխանատուներն են Տուրերկուլոզի ազգային ծրագրի ղեկավար Վ. Պողոսյանը և ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության պետ Ա. Վանյանը:
3. «Հանրապետական հակատուրերկուլոզային դիսպանսեր» ՓԲԸ-ի դեղորայքակայուն բաժանմունքի կահավորման և սարքավորումներով հագեցման իրականացում: Վերջինիս իրականացումը նախատեսվում է ավարտել 2008 թվականի դեկտեմբեր ամսին: Նշված գործընթացի պատասխանատու է հանդիսանում Գնումների գործակալությունը:
4. MDR աշխատանքային խմբի ստեղծում, որի կազմի մեջ են MSF, NTP, ICRC, Գլոբալ ֆոնդի կողմից «Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» ծրագիր, ՀՀ-ում դեղորայքակայուն տուրերկուլոզի պատասխանատու: Նշված աշխատանքային խումբը ստեղծվել է 2008 թվականի հոկտեմբերին:
5. Գեղերի վերջնական պատվերի ներկայացում, որը նախատեսվում է իրականացնել 2008 թվականի հոկտեմբերի վերջին: Նշված գործընթացի պատասխանատուն է MDR աշխատանքային խումբը:

6. Միջազգային փորձագետի ներգրավում, որը նախատեսվում է իրականացնել 2008 թվականի դեկտեմբերին: Փորձագետի ներգրավման հարցում իր պատրաստակամությունն է հայտնել MSF-ը:
7. MDR-ի կազմակերպման չափորոշի մշակում: Նշված չափորոշիչը նախատեսվում է հաստատել 2008 թվականի դեկտեմբերին, որի պատասխանատուն է MDR աշխատանքային խումբը:
8. ՏԲ կարիներտների վերջնական ձևավորում: Սույն գործընթացի իրականացումը նախատեսվում է ավարտել 2008 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Պատասխանատուներն են՝ ՀՀ առողջապահության նախարարության «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ը և Երևանի քաղաքապետարանը:
9. DOTS-ի և DOT-ի ուժեղացում, որը կիրականացվի ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 22-ին ստեղծված ՀՀ-ում բուժաշխատողի անմիջական հսկողության ներքո տուբերկուլոզով հիվանդների բուժման գործընթացի ներդրումը և իրականացումը հսկող աշխատանքային խմբի միջոցով: